ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԴԱՐԲԱՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Դարբաս
e-mail darbas.syuniq@mta.gov.am
հեռ. 094-99-62-61

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետ
պարոն Վ. Հակոբյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դարբաս համայնքի 2016թ նոյեմբերի 25-ի ավագանու թիվ 28(Ա), 29(Ն), 30(Ն), 31(Ն), 32(Ն) որոշումները:

Դարբաս գյուղական համայնքի ղեկավար Ս. Ստեփանյան

«28» նոյեմբերի 2016թ
գյուղ Դարբաս

08 12 № 9632 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնք
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Դարբաս, (094) 99 62 61, darbas.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2016 թվականի N 28 (Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, Դարբաս համայնքի ավագանին

Որոշում է.

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի նիստի օրակարգը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:
3. ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքում 2017թ մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափերը սահմանելու մասին:
4. 2016թ տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
5. ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին:

Դարբաս համայնքի ավագանու անդամներ.
Կողմ (4), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Վասպուր Ասատրյան _____,
Վազգեն Սկրտչյան _____,
Օլեգ Սանթրյան _____,
Վալերիկ Օհանյան _____:

Համայնքի ղեկավար Ս. Ստեփանյան

25.11.2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնք
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Դարբաս, (094) 99 62 61, darbas.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2016 թվականի N 29(Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին

Որոշում է.

1. Ընդունել Դարբաս համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի: (Կցվում է՝ հավելված 1):
2. Ուժը կորցրած ճանաչել Դարբաս համայնքի ավագանու 2012թ նոյեմբերի 23-ի կանոնակարգը հաստատելու մասին թիվ 15(Ն) որոշումը:

Դարբաս համայնքի ավագանու անդամներ.

Կողմ (4), Դեմ (0), Չեռնպահ (0)

Վասպուր Ասատրյան_____,
Վազգեն Մկրտչյան_____,
Օլեգ Սանթրյան_____,
Վալերիկ Օհանյան_____:

Համայնքի ղեկավար՝ Ս. Ստեփանյան

25.11.2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնք
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Դարբասն, (094) 99 62 61, darbas.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2016 թվականի N 30(Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8, 9, 10, 11 հոդվածներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, համայնքի ավագանին

Որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 2-ի: (Կցվում է՝ հավելված 2):
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի: (Կցվում է՝ հավելված 3)
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքում 2017 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 4-ի: (Կցվում է՝ հավելված 4):
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքում 2017 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի: (Կցվում է՝ հավելված 5):
5. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Դարբաս համայնքի ավագանու անդամներ.

Կողմ (4), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Վասպուր Ասատրյան
Վազգեն Մկրտչյան
Օլեգ Սանթրյան
Վալերիկ Օհանյան

Համայնքի ղեկավար Ս. Ստեփանյան

25.11.2016թ

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 30(Ն) որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքում սահմանվում է տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար.
3. համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.
4. համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.
5. համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
6. համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
7. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.
8. համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
9. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.
10. համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
11. համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ստեփանյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի [illegible] համայնքի ավագանու
2016թ. [illegible] 25-ի թիվ 30(Ն) որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԱՍ [illegible] ԱՅԼՔՈՒՄ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.
2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
   ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.
   բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.
   գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր

շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 դրամ.
2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 15000դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 5250դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ.
4) Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1քմ դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 910 դրամ.

9 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 3000դրամ:

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 15000դրամ:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ստեփանյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու
2016թ նոյեմբերի 25-ի թիվ 30(Ն) որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ.
2. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.
4. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.
5. շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ստեփանյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու
2016թ նոյեմբերի 25-ի թիվ 30 (Ն) որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 20000 դրամ:
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանվում է՝ մասնակիցներից վճար 3000 դրամ:
4. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝
   1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ.
   2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1500 դրամ:
5. Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500դրամ:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնք
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Դարբաս, (094) 99 62 61, darbas.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2016 թվականի N 31(Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ու հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, Դարբաս համայնքի ավագանին

Որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի կողմից 2017 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 6-ի: (Կցվում է՝ հավելված 6):
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Դարբաս համայնքի ավագանու անդամներ.

Կողմ (4), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Վասպուր Ասատրյան,
Վազգեն Մկրտչյան,
Օլեգ Սանթրյան,
Վալերիկ Օհանյան:

Համայնքի ղեկավար՝ Ս. Ստեփանյան

25.11.2016թ

Հավելված 6
ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ավագանու
2016թ նոյեմբերի 25-ի թիվ 31 (Ն) որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատություն հաճախող երեխայի ամսական վարձավճարը 2017 թվականի համար սահմանվում է 2500 դրամ:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնք
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Դարբաս, (094) 99 62 61, darbas.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2016 թվականի N 32(Ն)

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով և 34-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներում կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, Դարբաս համայնքի ավագանին

Որոշում է.

1. Դարբաս համայնքի 2016թ բյուջեի պահուստային ֆոնդից 200 000 դրամ տրամադրել նախադպրոցական կրթություն /09-1-1 51/ ծրագրի 4511 (սուբսիդիա) հոդվածին:
2. Համայնքի 2016թ բյուջեի պահուստային ֆոնդից 50 000 դրամ տրամադրել աղբահանում /05-1-1 51/ ծրագրի 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածին:
3. Համայնքի 2016թ բյուջեի պահուստային ֆոնդից 150 000 դրամ տրամադրել այլ մշակութային կազմակերպություններ /08-2-1 51/ ծրագրի 4269 հոդվածին:

Դարբաս համայնքի ավագանու անդամներ.

Կողմ (4), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Վասպուր Ասատրյան_____,
Վազգեն Մկրտչյան_____,
Օլեգ Սանթրյան_____,
Վալերիկ Օհանյան_____

Համայնքի ղեկավար՝ Ս. Ստեփանյան

25.11.2016թ